ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 227 - Ա
24 դեկտեմբերի 2013 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<թ>> ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված <<Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգ>>-ի 7-րդ կետը

որոշում եմ՝

1.Հաստատել 25.12.2013թ. ժամը 11^{00}-ին, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի ,,Գեղհովիտի ԱԱՊԿ,, փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցութային հանձնաժողովի կազմը՝ Անդրանիկ Հակոբյան /մարզպետի տեղակալ/, Մելքոնյան Աշոտ /մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ/, Մուշեղյան Յուրա /մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար/, Այվազյան Մեխակ /մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ/, Ղազարյան Նորիկ /մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ/ Շահբազյան Հասմիկ /մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ/, Գալոյան Մամիկոն /մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ/:

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Ա. Հակոբյանին, քարտուղար՝ Յու. Մուշեղյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ